

ՍՈՒՐՋԱՆԴԱՆԻ ԲԱԶՄԱՎԻՊԻ

ՆՈՐ ՀԱՐՑՄՈՒՆՔ

1. ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եւրոպական և հայկական դպրոցներին գործունեութիւնը հասնամատուցեալ մէջ դնելով, և մորա կարեւորութիւնը աչքի առաջ ունենով, հարցնում ենք .

- ա. Ի՞նչպէս է կատարում հայկական դպրոցը իւր ստանձնած կրթական գործը, և միամտութիւն ունի արդեօք եւրոպականին հետ :
- բ. Արդեօք ընտանիքը բարոյապէս օգնում է դպրոցական կրթութեանը, թէ խղճըդոտ է համդիւսմում մը :
- գ. Եթէ խղճըդոտ է համդիւսմում, կարելի՞ է վերացնել սոց. և ի՞նչ միջոցներով :
- դ. Կրթութեան մէջ դպրոցի՞ գործն է աւելի օգտաւէտ՝ թէ ընտանիքի :

2. ՄԵՐՔ ԿՈՒՄ ԽՈՐՔ

Կարելի՞ է արդեօք **Քաղաքիպի Սոսնան** զաւիկ միջոցով մերկայացնեն հայ հասարակութեան հետեւեալ հարցումները, և ամոնց լուծումը ստանալ :

- ա. Սկզբնաբար ե՞րբ և ի՞նչպէս սկսեց (եւսիսկոպտական) միտքի կամ խոյրի գործածութիւնը եկեղեցւոյ մէջ :
- բ. Միտքի գործածութիւնը արեւմտեան եկեղեցւոյ միայն յատուկ կ'երեւի, զի Յոյնք չունին զայն, արդ ե՞րբ մտնո է այն և ի՞նչ կերպով հայկական եկեղեցւոյ մէջ :
- գ. Նախ քան զայն ի՞նչ կը գործածէին ազգիս եպիսկոպոսութիւնը :

3. ՇԱՐԿԱԿԱՆՔ

Եւրոպիկ լրագրի տարւոյս 5 թուոյն մէջ կարդացինք «Սրբամուկ շարականը» վերնագրով յօդուած մի, որ կը բողոքէր շարականները «յապաւելու» առաջարկութեան դէմ, զոր ոմանք

- ըրած. են վերջեւս, Թէ արդեօք իրաւացի՞ է այդ առաջարկութիւնը՝ թէ ոչ, փափաքելի է իմամալ .
- ա. Շարականաց արդիւ թիւն և լպշտաման կերպով հիշ են թէ մորամուտ :
- բ. Եթէ մոր են, չէ՞ կարելի փոփոխել զամոնք, ստանց վնասելու ալարողութեան ոգւոյն :

— — —

ՊԱՏԱՍԽԱՆԻՔ

ՓԵՔՐՈՒՄ ԱՄՍՈՑ ՍՈՒՐՋԱՆԴԱԿԱՆ

— — —

2. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԿԱՆ ԲԱՐՔՐՈՑՈՑ ԱՐՈՒՅՍՏԻ ԿԱՄ ԳԻՏՈՒԹԵԱՆ ՄԻ ՄԱՍՆԱԶԻՆԻԿԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆ

« Աշակերտ մը, որ իր շրջանը աւարտելէն վերջը ուզէ բարձրագոյն արուեստի մը կամ գիտութեան մը հետամուտ ըլլալ, որ մասնաճիւղը պէտք է ընտրէ՝ որ թէ ազգին և թէ ընտանեացը շահաւոր և պատուաւոր ըլլայ միանգամայն ներկայ պարագայից մէջ » :

Իւրաքանչիւր մի երիտասարդ, որ իւր մըտաւոր հորիզոնը ընդարձակելով, կամենում է բաւարարութիւն տալ թէ՛ իւր մտաւոր և թէ՛ իւր ազգայնայն ինքնական պայմաններին՝ համալսարանական մի որ և իցէ մասնաճիւղի ընտրողութեան մէջ, պէտք է միշտ աչքի առաջ ունենայ երկու գլխաւոր կէտեր. այն է՝ պատիւը և շահը : Որքան էլ այս երկու վերացական մտքերը հակապատկերներ ներկայացնեն իրենց կեանքի ընթացքի մէջ, որքան էլ մարդու ահաւատական միտումները հակուած լինեն զէպ ի սրանցից երկրորդը, բայց և այնպէս իւրաքանչիւր մի կրթուած, հասունացած միտք պէտք է ձգտի զէպ ի առաջինը, որովհետեւ նա է, որ իւր բարոյական զօրութեամբ կարող է առաջացնել և միւսը, նա է որ ընթացիկ կեանքի մէջ երբեք կախում չունի շահից, (խօսքը նիւթական շահի վերայ է), և շատ աւելի բարձր է կանգնած նորա մակերեսիցից. այն ինչ շահը միշտ կախում է ունեցել պատուից, որովհետեւ միշտ, երբ երիտասարդը, համաձայն իւր ընտրած մասն

նաճիւղի պահանջած մանրամասնութիւններն, որն, գործ կ'ընի իւր ամբողջ կարողութիւնը պատուաւոր կերպով առաջ ստանելու իւր պատուաւոր գործը, շահը հետեւել է միշտ նորա շաւղից : Բայց որովհետեւ ամեն տեղ բացառութիւններ կարող են պատահել, ուստի կարող ենք ենթադրել որ պատուաւոր գործը շահաւոր չ'լինի : Նոյնպէս և աւելի մեծ հաւանականութեամբ կարող ենք ենթադրել որ շահաւոր գործը պատուաւոր չ'լինի : այժմ, հարցնում ենք, որքան աւելի նախադասել այս բացառութիւններից, պատուաւոր լինել առանց շահի, թէ շահաւոր առանց պատուի : այս հարցը մեզ այնքան պարզ է թուում, որ կարծես չենք համարում ուրիշ բացատրութիւններ չ'բացարձակել : Բայց չենք ուզում աւելի, որ շահը բոլորովին ի նկատի չ'պիտի ունենալ : ոչ, որովհետեւ իւրաքանչիւր անհատի վերայ հանրացած է բարոյական մի մեծ պարտք, այն է՝ հսկել իւր ընտանիքի նիւթաւանդութեան վերայ, և ով որ փախուստ տալով այդ պարտականութիւնից՝ նայում է իւր հաճոյքների ծառայել, ասել է որ նա պարտազանց է : Բայց որքան մեծ կ'լինէր նորա գործած յանցանքը, եթէ կորցնէր իւր ընտանիքի պատիւը :

Որովհետեւ, ինչպէս վերին ասացինք, պատուաւոր գործը համարեա միշտ կարող է լինել և օգտաւէտ, ուստի այս երկուսը ենթադրելով որպէս անբաժան միութիւն, ասես նենք թի՛նջ տեսակ մասնամիջոց կարող է լինել թէ՛ պատուաւոր և թէ՛ շահաւոր իւր ազդին վերաբերեալ : Սորա համար առաջին պայմանն է ճանաչել իւր ազգը, նորա ամբողջ էութիւնը, և վերջապէս հասկանալ նորա կարեւորութիւնը, պահանջները : Երկրորդ է պայմանն է, որ երիտասարդ կարողանայ չափել, գիտենալ իւր ոյժերը, հասկանալ ինչ բանի կարողութիւն ունի, որովհետեւ առանց աչքի առաջ ունենալու այս, իւր ձեռնարկած գործը

բացի անօգտաւէտութիւնից անպատուաբեր ևս կարող է դառնալ : Իւրաքանչիւր ձեռնարկութիւն կարող է լինել շահաւոր և պատուաւոր իւր ազգի համար, եթէ նա համապատասխանում է այն պայմաններին, որոնցից մի քանիսը մենք կ'իշխենք այստեղ :

1. Երբ հոգս է տանում իւր ժողովրդի մտաւոր և բարոյականը զարգացնելու՝ լինի զբաղականութեան, լինի արդիւյց զատարաւ կութեան միջոցով, լինի կրօնական, առողջապահական և գիտական ճանապարհով, վերջապէս ուսմանց մի ամբողջ հոսանքով :

2. Երբ աշխատում է զարգացնել նորա գեղարուեստական ճաշակը, լինի թատրոնի միջոցով, լինի նկարչութեան, ճարտարապետութեան, երգչեղջողութեան միջոցով, որոնցով կրթութիւն են մարդուս զգացումները, և ընդունակ է դառնում ըմբռնելու գեղեցիկը :

3. Երբ աշխատում է կանոնաւորել ժողովրդի ընկերավարական կանոնները, աշխատում է ապահովել նորա նիւթական դրութիւնը, լինի դա թէ՛ զիւղաւորութեան և թէ՛ արհեստներու բարգաւաճման միջոցով :

Այս բոլորը լինելով պատուաւոր ձեռնարկութիւններ, եղել են և պիտի լինին միշտ ազգի համար շատ օգտաւէտ : Բայց գործը բաւականին դժուարանում է, երբ աչքի առաջ ենք առնում ընտանիքի շահը և պատիւը : որովհետեւ թէ և նորա պատիւը միշտ զուգընթաց կարող է ընթանալ մեր յիշած պայմանների հետ, բայց շահը ընդհանրապէս հակառակ է եղել մեր յիշած առաջին մասին՝ չ'հաշուելով բացառութիւնները : և ճշմարիտ, որ զբաղան անձնաւորութիւնը, որ ուսուցիչը, որ հրապարակախօսը մեր ազգի մէջ կարողացել է շահաւոր դուրս գալ : Ընդհակառակը միշտ մեր աչքի առաջ են մեր գրական անձնաւորութեանց փոքրիկ խմբակի խեղճ դրութիւնը : Բայց որքան մեծ կ'լինէր մի երիտասարդի գործը, եթէ բաւականանալով իւր փոքրիկ նիւթականով, աշխատէր առաջ տանել այն, որ ազգի օգտաւէտութեան առաջին պայմանն է : Ընտանիքի շահը կախումն ունի նաև տեղից, որտեղ նա ապրում է : օրինակ՝ քաղաքային արարքեր դրութեանց մէջ է

1. Մենք այս բանը աչքի առանց մասնաւորապէս նորա համար, որ ժողովրդաբար շատ երիտասարդներ, առանց փնտռելու պատուի մասնակցութիւնը, ձեռք են առնում շահաւոր գործը :

Ռուսահայոց նիւթական դրութիւնը, բոլորու-
մին տարբեր Տաճկահայոցը, որտեղ ներկա-
յումս ոչ մի արհեստ կամ ուսում չի կարող
ծառայել որպէս ապրուստի ապահովութեան
միջոց: Ուստի այն հարցը թէ քի մասնա-
ճիւղը կարող է լինել շահաւոր և պատուաւոր
թէ ազգին և թէ ընտանեաց, մի այնպիսի
հարց է, որ չի կարելի բացարձակապէս մատ-
նանիշ անելով նորան անուանել. որովհետեւ
ինչպէս ազգի օգտի համար կարելի է աշ-
խատել իւրաքանչիւր մի անկէնում և օգ-
տաւէտ լինել, ընդհակառակը ընտանիքի
շահը չափազանց փոփոխական է և կախումն
ունի երիտասարդի կարողութիւնից, տեղից և
զանազան հանգամանքներից, որ կարող է
հասկանալ միայն ինքը երիտասարդը՝ աչքի
առաջ ունենալով բոլոր շրջապատող պայման-
ները:

Սրանից հետեւում է, որ երբ մի ձեռ-
նարկութիւն պատուաւոր է թէ ազգի և թէ
ընտանիքի համար, կարող է նա օգտաւէտ
լինել առաջինին, իսկ երկրորդին ոչ:

Տ. Բ.

3. ՔՐԻՍՏՈՍԻ ԵՆԿԵՆԱՆ ՏՕՆԸ ԸՍՏ ՍՈՎՈՐՈՒ-
ԹԵԱՆ ՀԱՅՎԱԿԱՆ ԵԿԵՆԵՆՈՑ

(Ա. Պատասխան)

Սուրհանդակն այս մասին կ'առաջարկէր
հինգ հարցումներ, զորս չկրկնելու համար՝
ընթերցողաց կը թողունք իմանալ զանոնք
մեր պատասխաններէն: — Այս նիւթին վե-
րայ առ այժմ բաւական կը համարինք հե-
տեւեալ համառօտ ծանօթութիւններն:

Ա. Ոչ ոք ի բանասիրաց կ'անգիտանայ՝
թէ արեւելեան եկեղեցիքը, յորս յատկապէս
աղերսանդասցիք, եղիպտացիք, անաիորացիք,
երուսաղեմացիք* և պաղեստինացիք՝ Յայտ-
նութեան հետ կը տօնէին զԵփեսուզն ի 6

յունուարի, մինչև Դ զարուն վերջերն՝ յա-
րամ զատեցին երկու տօները: Այս բանին
վկայք են՝ ճառքն Եպիփանու (Հերձ. Ծ.)՝ Նա-
զիանզացոյ (ԾԸ), եւ ՅՆ. Ոսկերբերանի՝
վերջինս յամին 386 ի ժնոնդ փրկչին
խօսածին մէջ (ճառ ԼԱ) կ'ըսէ. « Դեռ տասն
տարի չկայ՝ որ ստուգու կը ճանաչենք մենք
այս տօնս (զատ Եփեսոյ) ... ի սկզբանէ ծա-
նօթ էր այն արեւմտեայց, և նաքա աւանդեցին
մեզ զայն »: Եւ յիրաւի՝ արեւմտեան եկե-
ղեցւոյ հարց ճանաչելն ևս, և յատկապէս ո.
Թերոնիսիայ յեղեկէն (Ա) և ո. Սկզբութիւնի
Թաղագոս Երրորդագործան (Ե) գրածներէն կ'
մանաւնք՝ թէ միշտ զատ տօնած են նոքա
զԵփեսուզն ի 25 զեկեմբերի, զոր կը հաս-
տատեն և այլ յայն հարք, Նազիանզացի և
Բարսեղ: Յատուրաց ևս ո. Եփեսմ կը
զրէ, թէ « Եփեսու (Թս.)՝ որ օր վեց էր քա-
ղոց ամսոյ ըստ յունարէն թուոյ, ի ժամա-
նակի՝ յորժամ սկիզբն առնէ յաղթել լու-
սաւորն » (Հմբքոս. յէջ 19): Լուսաւորին
յաղթելու ամիսն, կամ ինչպէս ն. Լամբր.
կը մեկնէ այդ խօսքը, « ամիսն յորում ա-
րեգակն բարձրանայ » (Ստեփն.), զեկեմ-
բերն է, և քաղոցի վեցն՝ որ այժմ կը հա-
մապատասխանէ այդ ամսոյ 24ին (ըստ նոր
տոմ.): Ետմարական հաշուով կը նոյնանայ
Դ զարու 25ին հետ: Կային և արեւելեայք՝
որ Եփեսուզը նոյն օրը կը տօնէին ի վաղուց:

Բ. Մեր եկեղեցւոյ սովորութիւնն այլ
նոյն էր այլոց հետ մինչև ի 9 դար: Ա-
նանիայ շիրականայ (Է զարուն) ընծայուած
ճառն ի Յայտնագործին Տեսածն՝ կ'աւանդէ,
թէ Եփեսուզն բաժանումն ի Յայտնութեան՝
« յառաջ քան զբաղում ժամանակս (երբ այլ
արեւելեայք ընդունեցան) և ի մերս եկն
յաշխարհ, և ընկալեալ եղև, ... և հարուստ
ամն ձգեալ մինչև ցերանելին Յոհանն կաթո-
ղիկոս՝ որ ազգու մանապուհն էր. և ապա ...
(նոյն ինքն) թողուլ հրամայէ » զայն և յա-
ռաջին սովորութիւնս դառնալ (այս. Պետրոս.
յէջ 13): Բայց քան զայս ուղղագոյն է հայ-
կական ժողովոց մասին յիշատակարանի մի
աւանդածն, որ երկու տօնից վերտին միա-
ցումն աւելի յետ կը տանի բռնելով. « վե-
ցերորդ ժողով արար տէր Ներսէս (աշտարա-

* Սա. Որբելեան (ԺԴ դար) կ'աւանդէ՝ « կար-
գեալ ի ո. Յակոբայ (Եղբ. տն.) ի վեցն յա-
նուարի զԵփեսուզն, եւ ի վեցն ապրիլի զԱե-
տիսն » (ԶԼ. ԿԹ): Կայ այս և այլուր:

կեցի) ի Դուռնի... հակառակ ժողովոյն ֆազ-
կեղոնի, «... զԴննդեանն և զՄկրտումբեան
միառարեղով յոյժ ստիպմամբ » (հ. Միբ. Զմյ.
Պատմ. Բ, 493)։ Զենք տարակուսիք՝ որ այդ
միացումն ի յունաց զատուելու համար եղած
է, ինչպէս յայտնի է այդ յիշատակարանէն.
և զատուելու ճգոնքը տեղի ունեցան ոչ թէ
ի Մանգաղունայն, այլ Զ դարուն մէջ՝ ի ձեռն
ազգային ժողովոյն ումանց*։ ուրեմն երկու առ-
նից միացումն այլ այդ դարուն կատարուե-
ցաւ։ Այնուհետեւ յարատեւց այն միշտ. զի
թուպէս Եղբի օրով (ի դար) հայոց ընդ յոյսս
հայտութեամբ յունաց բաժնի հայերէն շատը
սկսան ինքնուրը վերստին 25ին տօնել, բայց
թէ մասնակի էր այն և թէ չաւեց երկար
(հ. Զմյ. պատմ. Բ, 221)։ այնպէս որ յաջորդ
(Ը) դարուն Բ՛. իմաստասեր կը գրէ իւր առ-
տեսնախօսութեան մէջ, թէ «զԱստուածոյայսա-
նութեանն եւ զԴննդեանն զօր ի վնցն յու-
նութիւն ի միասին տօնել սովոր է աշխարհս
մեր » (Գործք իւր, յէջ 12)։ Նոյնն արդէն
յաջորդ ամէն հարց դրուածոց և վիճարանու-
թեանց մէջ կը կարգանք։ Շնորհալին և իւր
յաջորդք (ԺԲ-ԺԳ դար) առ սէր միութեան
եկեղեցւոյ՝ աշխատեցան համոզել ազգը՝ զի-
շանքուն յունաց, և բաց յայլ բանի մի կե-
տեղէ՝ նա և ինքնուրը գատուել։ Գրիգոր առ-
նաւորեցի կթղ. իննդեան համար նոր շա-
րականներ շինած է, և հաւանորէն տօնը
զատ կը կատարէր ինքն ի Եկիւկիտ ։ Սոս
Զ ժողովն (յամին 1307) և Աստանային (ի
1316) յայտնապէս ընդունեցան երկու տօնից
բաժանումն. և թէպէտ ոչ ի վերին հայս,
բայց ուրեք ուրեք ի Եկիւկիտ գործադրեցին
զայն, և մինչև ցայսօր նոյն կրկնակի սովո-
րութիւնք կը տեսն յազգիս։

« Գ. Սուրհանդակի հարցման երրորդ կէտը,
թէ հայ եկեղեցւոյ տարաձայնութիւնն ինչ
աւանդութեան վերայ հիմնուած է, կամ եթէ
ի սկզբան համաձայն էր ուլոյց, երբ և ինչ

պատճառաւ փոխեր է յետոյ, տեսանք արդէն
նախորդ կետի պատասխանին մէջ։

Դ. Թէ արդեօք երկու տօնից միացումն
անպատեհութիւն ունեցեր է և այժմ ունի
թէ ոչ, այս մասամբ մեր համոզումն հետե-
ւեան է, ։ Թերեւս անպատեհ է — թէ և ոչ
շիւթելու և տաքնապելու չափ — երկու մե-
ծամեծ յիշատակները նոյն օրը տօնելն, որոյ
համար իսկ զատեցին զանոնք արեւելեան միւս
եկեղեցիք՝ հակառակ իրենց չորս դարու առ-
վորութեան։ Դարձեալ անպատեհ է միա-
ցումն, եթէ չզգորի եկեղեցւոյ պատակաւն
պատճառներէն մին լինելէ։ զի լամբրոնաց-
ւոյն սքանչելի բանից համեմատ՝ Քրիստոս
մեզ պատուիրան տուաւ « սիրել զմիմեանս », և
ոչ թէ իւր ինքնուրը դեկա. 25ին կամ յուն.
6ին տօնել. և եթէ սա հակառակի սիրոյն,
պէտք է յայնժամ աւանդութիւնք դրնել պա-
տուիրանին, (Ատենբ.)։ Աւելի ևս անպա-
տեհ է՝ մի և նոյն ազգի մէջ զանազան ժա-
մանակներ տօնել զայն՝ ինչպէս այժմ —
Արդ՝ կը ջնջուին ամէն անպատեհութիւնք,
եթէ բոլորս միաբանիք հաստատել սիրոյ
պատուիրանը մեր և ուրիշ քրիստոնեայ եղ-
բարց մէջ, և բոլոր հայերս նոյն օրը տօնենք
զայն ի 25 դեկ. կամ ի 6 յունուարի ընդ
Յայաստան, զի յայնժամ երկու յիշատակ-
ներ մի օր տօնելու թիթե անպատեհութիւնն
առ ոչ ինչ կը թուի, ինչպէս էր քրիստոնէու-
թեան առաջին չորս դարուց մէջ։

Ե. Վերջապէս առ այն՝ թէ հայ եկեղե-
ցին ունի՞ իրաւասութիւն փոխելու իւր հին
սովորութիւնք՝ թէ չունի, մենք ուսած ենք
ի պատմութենէ՝ թէ եկեղեցին ամէն ժամա-
նակ իշխանութիւն ունի արարողական փո-
փոխութիւններ ընելու։ Ինչպէս տեսանք,
մեր նախնիք աւելի քան դար մի՞ զատ առ-
նած են ինքնուրը ըստ այլ արեւելեայց. յետոյ
դարձեալ միացուցիւր, և մեզմէ ոչ շատ
յառաջ դարձեալ բաժներ են։ Ապա յայտնի
է՝ թէ այժմ ևս կարելի է բաժնել կամ
միացնել զայն, բայց միշտ համաձայնութեամբ
և սիրով։

Հացունի

* Ասորիկ կ'ըսէ, թէ Առաքալեցւոյն նոյն
ժողովով էր որ հայք « ի բաց կապին ի յու-
նաց հաղորդութենէ » (Բ, Բ)։ Տես այս կէտ
աւելի ընդարձակ ի Պատմ. հ. Զմյ. Բ, 493-504։

(Բ. Պատասխան).

Տարւոյս յունուարի Բագմավեպի Յասա-
շարահին մէջ բռտած էր, թէ յիշեալ ամ-
սաթերթին այսուհետեւ ըստ կարի պիտի գտու-
շանայր կրօնական խնդիրներ յարուցանելէ-
արդ Բիշէ Սոսրեանցակի ներկայ հարցու-
մըս : Անշուշտ այդ հարցումը առաջարկողն
իւր մտքին մէջ ունեցեր է՝ լոկ ծիսական
կամ եկեղեցական—կանոնական խնդիր մի
յարուցանել. հետեւաբար, կրօնական շրջանակէ
զուրա՝ իբր ուսումնականին պատկանող խնդիր
մի նկատեր է. այդ զիտմամբ եւս կը պա-
տասխանեմ ես ներկայ հարցմանս :

Քրիստոսի Յայտնութեան տօնը շատ հին
ժամանակներէ սկսեւր էր կատարուիլ թէ՛ ա-
րեւելեան եւ թէ արեւմտեան եկեղեցեաց
մէջ¹, ինչպէս կը վկայէ Լղիմէս առեքսան-
դրացին² : Այդ տօնախմբութեան կատարուե-
լու օրուան մասին ո՛չ մի ժամանակ խնդիր չէ
եղած ընաւ, զի միշտ հաստատապէս թէ՛ յա-
րեւելս եւ թէ յարեւմուտս կը կատարուէր եւ
կը կատարուի իսկ մինչեւ ցարդ ի 6 յունուարի:
Սակայն այդպէս չէ եղած Երնդեան տօնն,
զի գահաձաճման ժամանակներ շատ խնդրոց եւ
հակաճառութեանց նիւթ եղած է այլեւայլ
եկեղեցեաց եւ հեղինակաց մէջ :

Նախնարար արեւելեան եկեղեցեաց մէջ
յատկապէս չէր կատարուեր Քրիստոսի Երնդե-
ան տօնն, այլ լոկ հարեւանցի կերպով կը
յիշատակուէր այն Յայտնութեան տօնին հետ
միասին ի 6 յունուարի. եւ այս երկու տօ-
ներն ի միասին կը կոչուէին Աստուածա-
յայտնութեան տօնն (Θεοφάνεια). զայս կը հաս-
տատեն նա եւ արեւելեան եկեղեցեաց ա. Հարց
ճառերն, որոց մէջ կը յիշուին միանգամայն
(նոյն օրուան մէջ) Երնդեան, Յայտնութեան
եւ Մկրտուկեան տօներն : Արեւմտեաց սովոր-
ութիւնն բոլորովին սարգեր էր այս մասին.
Նորա հին աւանդութեան մի վերայ հաստա-
տուած, ինչպէս կ'ըսէ ա. Ազոտտինոս³, ի
սկզբանէ հետէ զեկամեմբերի 25ին կը տօ-
նէին Քրիստոսի Երնդդը, զոր կը հաստա-
տեն նա եւ Առաքելական Մանսնարարութիւնը
եւ արեւմտեան եկեղեցեաց ա. Հարց ճառերն⁴ :

Դ. զարուս վերջերս արեւելեան եկեղեցին
փոխելով իւր վաղեմի սովորութիւնը համա-
ձայնեցաւ արեւմտեանին հետ, եւ զատելով
Երնդդը ի Յայտնութենէ՝ սկսաւ առաջինը
տօնել ի 25 զեկամեմբերի, եւ վերջինը ան-
փոփոխ պահեց ի 6 յունուարի. զայս կը
հաստատեն ա. Քրիզոստոմ Նազիանզացի եւ ա.
Ոսկեբերան, որոնք զատ եւ որիչ ճառերով
կը խօսին Երնդեան եւ Յայտնութեան տօնե-
րուն վերայ : Տակաւ առաւել իջնորդութիւն
եւս մտաւ զատաւ այս սովորութիւնս, որով բու-
վանգակ քրիստոնէական աշխարհն համաձայնե-
ցաւ արեւմտեան եկեղեցեաց հետ յայտն մա-
սին : Ոսկեբերանի վկայութեան վերայ հաւ-
տատուած՝ կրնանք ըսել թէ այս փոփոխու-
թիւնս պատահեցաւ իբր Քրիստոսի 376 թը-
ականին. որովհետեւ նոյն ինչն յամին 386
յԱնտիոք խօսած Քրիստոսի Երնդեան ճառին
մէջ կ'ըսէ, թէ ե ոչ տարւ առաքի աղերս է
զեա՞ որ յարեւմտեան թերութեաց յարեւելս
Քրիստոսի Երնդդը զեկամեմբերի 25ին տօ-
նելու սովորութիւնն : Զայս չէր գիտեր առ-

1. Մեծանուն գերմանացի եկեղեցական պատ-
մագետն Հերդենրեյխեր կ'ըսէ. a Զորրորդ դարու
մէջ ընդունեցաւ արեւմտեան եկեղեցին արեւ-
ելքէն Յայտնութեան տօնը. եւ փոխադարձա-
բար արեւելեան եկեղեցին եւս արեւմտեանէն
առաւ Երնդդեան տօնը զեկամեմբերի 25ին ».
(Հմմտ. վարդապետադոքտէն առաքելոց եւ այլն,
շ. 8. Տալեան, Վեհեան, 1896, էջ 68):

2. Յաճախապատշաճ, Ա. ա. — Տիտոս
Փլաւինոս Ազեմէս, ծնեալ յԱղեքսանդրիա՝ Քրի-
ստոսի 130 թուականին ժամանակները, եւ վախ-
ճանեալ իբր 217ին, նախ հեթանոս էր եւ ապա
դարձաւ ի քրիստոնէութիւն ի ձեռն ա. Պան-
տենսի, որուն եւ յաջորդեց՝ իբր առաջինորդ
Աղեքսանդրիայ քրիստոնէայ վարժարանին : Իւր
զիւնաւոր քրօթիւնը եւ, Յորդորդ առ հերակուսս,
Դասախարակ, եւ մանաւանդ Յաճախապատշաճ
(Σωπαρτας) կոչուած գիրքն :

1. Յաղագս Երրորդորդոքտէս, Դ. ե :

2. Երուսաղեմայ եկեղեցին եւս յայտն մասին
համաձայն էր արեւմտեան եկեղեցեաց, կ'ըսեն
մանեք. իսկ այլը, թէ առաջին անգամ ա. Արե-
ւել իրուսաղեմայ հայրապետն եղաւ որ զատեց
երկու տօները :

կախն Ս. Եփրեմ¹ իւր Համարադրաբար գր-
րած միջոց, որովհետեւ Քրիստոսի յննդեան
վերայ խօսելով կ'ըսէ (էջ 19). « Եւ ծնա-
նա՝ որ օր վեց էր քաղոց ամսոյ, ըստ յու-
նարէն թուոյ » . այդ « քաղոց ամսոյ վեցն »
ոմանք կը հասկանան զեկտ. 25ը նոյն տարւոյ,
այլք նոյն ամսոյ 14ը, բայց շատք հաւա-
նականաբար կը հասկանան յունուարի 6ը,
ինչպէս կը վկայէ նաեւ Բար-Սալիբի ասորի
մատենագիրն ԺԲ դարու² :

Ներկայապէս միայն հայ եկեղեցին է՝ որ
բացառութիւն կը կազմէ ընդհանուր եկեղե-
ցիէն՝ Քրիստոսի յննդեան եւ Յայտնութիւնը
միասին կատարելով ի 6 յունուարի. եւ այս
պատճառաւ եւս սեծմանմբ մէճեր ծագքր են
Հայոց եւ միւս եկեղեցեաց մէջ։ Թերեւս
մերոց այդ սովորութեան այնքան յամառու-
թեամբ յարելուն պատճառն էր՝ Ասաքելա-
կան կանոնագրոց մէջ գտնուած այն կանոնն,
որ կը պատուիրէր, թէ « Եղեցի օտն
յննդեան եւ Յայտնութեան Տեսնոն եւ փրկիւն
մերոյ, որ է զլուսն եւ սկիզբն օտնից եկեւ-
ղեցոյ, որ օր զ յունուարի ամսոյ ըստ յու-
նարէն թուոյ » Եւ Սուր, ինչպէս զիտել կու
տայ Հ. Բ. Տաշեան իւր վարդապետութիւն
ասաքելոց, եւ այլն, զորքին մէջ (էջ 67),
այդ կանոնին մէջ գտնուած յննդեան բառն
չի կայ ասորի բնագրին մէջ, այլ հայ խմբ-
բագրին կամ թարգմանչին յաւելուածն է.
եւ ճիշդ այդ թարգմանութիւնն կամ խմբա-
գրութիւնն է՝ զոր աչքին առջեւ ունեցեր է Ա.
Շիրակացի³ Է. դարուն մէջ, եւ այն կանոնին
հեղինակութեան վերայ յենլով՝ բոլուն կերպով
կը պաշտպանէ հայկական եկեղեցոյ սովոր-
ութիւնը⁴։ Եւսագայ ազգային մատենագիրք

եւ պատմիչք, կաթողիկոսք եւ ժողովք, զուգէ
աւելի հակառակասիրութեան՝ քան ճշմար-
տասիրութեան՝ ուլում զորեալք պաշտպան
հանդիսացան այդ սովորութեան։ Սակայն
շատ հաւանական է կարծել, թէ հայկական
եկեղեցին եւս ժամանակ մի յայտմ հետեւե-
ցաւ Յունացի եւ միւս եկեղեցեաց։ Ս. Սահակ
եւ ս. Մեսրոպ, որք այնքան սիրով են ըն-
տանութեամբ կապուած էին յունական եկե-
ղեցոյ եւ ի մասնաւորի Բիւզանդիոնի հայրա-
պետաց հետ, եւ զրեթէ հպատակք նոցա ամե-
նայն ակնարկութեանց, կարելի էր որ այդ զը-
խաւոր բարեկարգական խնդրոյն մէջ տարբե-
րէին ի Յունաց։ Նոյն իսկ Անանիա Շիրակացին
կը հաստատուի, թէ մեր աշխարհին մէջ եւս
մտաւ Քրիստոսի յննդեան օտնը՝ զատ ի
Յայտնութեան՝ կատարելու սովորութիւնն։
Կ'ըսէ նա. « Եւ ինկայեալ եղիւ (այն), —
ուշ զնելու է հետեւեալ խօսքերուն, — որ-
պէս յանգեաւ եղեցոյ ճշմարտութեանց, —
(մեր բարեմիտ Շիրակացին այդ բացատրու-
թեամբ կ'ակնարկէ զուցէ ս. Սահակ, Բ.
Մեսրոպ, ս. Յովսէփ, Գիւսն եւ այլ կաթո-
ղիկոսները, զի ճիշդ նոցա ժամանակը պա-
տահեցաւ այդ), — եւ հարուստ ամն ձեւալ
մինչեւ ցերանելին Յովհանն կաթողիկոսն որ
ազգաւ մանդակունի էր. եւ ապա նորա ի
խնդիր եղեալ ճշմարտութեանն, եւ քննեալ
եւ հառու լեալ թողուլ հրամայէ » (էջ 13)։
Անշուշտ Անանիա այդ խօսքը ըսեր է՝ Ման-
դակունի անուամբ յիշուած կանոնին վերայ
հաստատուած, որ կ'ըսուի. « Եւ որ յննդե
առնեն յառաջ քան զՅայտնութիւնն՝ չէ
արժան, զի սուտ է. զի յննդե եւ Յայտ-
նութիւն մի են » Եւսնց կ'ընեմ մէջ բե-

1. Սորա մահուան տարեթիւն անորոշ է,
չատգ կը զնեն զայն 378—380 տարեներուն մէջ,
այլ զուցէ ճշգրտան է նոցա կարծիքն՝ որք կը
զնեն զայն աւելի կանուխ, յամա 373—374։

2. Հմմտ. վարդապետութիւն ասաքելոց, Հ.
Բ. Տաշեան, Եւսնց, էջ 68—69։

3. Անանիայի Երեւակունի Միջնորդք բա-
նից, հրատ. Ք. Պ. Պ., Պետերբուրգ, 1877, էջ 4։

4. Կրեւորու է թէ Շիրակացոյ ճառն ի Յայտ-
նութիւն Տեսնոն խանգարուեր եւ յաւելուածներ
ունեցեր է յետագայ գրչներէ։ Յէջ 6, Մա-

կարայ թուղթը կը վերջապէս այս խօսքերով.
« Զայս Մակարիս (Մակարիոս) »։ Յետոյ կը յա-
ւելու նոր առղով. « Զայս վկայէ եւ Մակարայ
աստուածաբան Քրիզոստոս... » Եւ յետոյ դարձեալ
նոր առղով կը սկսի. « Իսկ զկնի աղոյս յա-
ւելորդէ զաթոս հայրապետութեան Երեսուդեմի
ս. Կիրիլոս » . յայտ է թէ այդ աղոյսն կը նշա-
նակէ զՄակար եւ ոչ թէ զՔրիզոստոս աստուածա-
բան. հետեւաբար այն միջանկեալ տունը « Զայս
վկայէ եւ Մակարայ... վասն զի եւ ամենայն
վասնանի », բողբոսիկն անկապ է այն տեղ, եւ
ուրիշ յետագայ գրչի յաւելուած է։

բել աստ ուրիշ բազմաթիւ վկայութիւններ մեր ազգային ժողովոց, կանոնադրոց եւ եկեղեցական մատենագրաց, որոնք գրեթէ բոլորն այլ միաձայն պաշտպան կը կանգնին՝ միայն հայկական եկեղեցոյ յատուկ այս սովորութեան :

Ոլլափ որ այդ՝ յիշդեան տօնը միացած կամ զատուած կատարելու՝ խնդիրն լիք ծիսական եւ բարեկարգութեան պատկանող խնդիր մ'է, սակայն փափաքելի չէ՝ որ այդ մասին բոլոր քրիստոնեայ եկեղեցեաց մէջ եւ լինելը միութիւն, որ սերտ կապ մի կը հաստատէ միացող անդամաց մէջ եւ ներքին բարոյական ոյժ մի կու տայ ամբողջութեան վրան զի միայն այգոր բացակայութեամբն է, — ինչպէս փորձն յայտնի կը ցուցնէ, — որ յաճախ յառաջ կու գայ ազդի կամ ընտանեաց մի քայքայում : Ապա փափաքելի էր, որ ոչ միայն Քրիստոսի յիշդեան տօնի կատարման մէջ համաձայնէր մեր ազգն այլ միւս բոլոր քրիստոնեայ եկեղեցեաց հետ, — ինչպէս պատշաճ տեսնել են ժամանակաւ համաձայնի յայդմ երկու մեծ արեւելեան եկեղեցիք, յունականն եւ աւստրականն, իրենց ամենափայլուն շրջանին մէջոց, — այլ եւ թողոր՝ եթէ կարելի էր՝ Յուդեան տոմարը, որուն անպատեհութիւնքն ակնյայտն են, եւ ընդունէր բոլոր գիտնական Եւրոպայի հետ Գրիգորեան տոմարը. մանաւանդ որ այսպիսի համաձայնութենէ մի իրեն գոյութեան մի ո՛ր եւ է վտանգ կամ ֆէնաս յառաջ գալու բնաւ երկիւղ չի կայ, զի օտ պարզաբար գիտական խնդիր մ'է, կրօնական շրջանակէ բոլորովին զուրս : Ո՛ր թաղունք որ, ինչպէս վերը յիշատակեցինք, մեր ազգն եւ եկեղեցին եւս՝ հաւանականաբար իւր օտեղորուն մէջ՝ նոյն իսկ ս. Մահակայ եւ ս. Մեարութայ կենդանութեան ժամանակ, միաբաններ էր յայդմ ընդհանուր եկեղեցոյ սովորութեան հետ. եւ յետոյ, պարզաբար հակադասութեան ձկտումով, ինչպէս յայտնի է այն ժամանակի պարագաներէն, զարձեայ նախկին սովորութեան հետեւեր է :

Բիշրանացի

Կ. ՏԱՐԻՈՑԵՆ ԵՐԿՈՒՆ ԱՌԱՋԻՆ ԱՄՍՈՑ ԱՆՈՒԱՆԻՐ

(Ա Պատասխան)

Այս մասին Բազմավիպի Մոսկովական հետեւեայ հարցերը կ'ուղղէ Հանդիսարանի ընթերցողաց. « Փոխանակ Յանուար (Januarius) եւ Փեբրուար (Februarius) գրելու եւ հնչելու՝ արդեօք սխալ կը լինի գրել եւ հնչել Յուանուար եւ Փետրուար, ինչպէս այժմ սովորութիւն է. եւ եթէ վերջինս սխալ է՝ ինչու չենք ուղղեր. իսկ եթէ ուղիղ է՝ ինչ ապացոյց կայ » :

Յայտնի է որ Յանուար անուան գործածութիւնն՝ բոտ պատմութեան՝ Հռովմայեցիներէն ծագեր է, որ ուղելով սաւառնի մէկ ամիսը նուիրել Յանոս (Janus) աստուածոյն՝ կոչեցին զայն Januarius, իբր թէ Յանոսակաւ, որ հայերէն տառափոխելով կը լինի Յանուար, եւ իբրք ալ այդպէս գրուած տեսած եմ ժամանակաւ՝ ոչ ոսկաւ տեղեր նախնեաց Տօմարագիտական գրառածոց եւ Յայնա մատգրանքոս մէջ : — Այժմ ձեռագիր հաւաքածոներէ հեռու գտնուելով՝ չեմ կարող ստուգել թէ վերոյիշեալ ձեւերէն (Յանուար եւ Յուանուար) ո՞րն աւելի յաճախ գործածուած է, եւ կամ ե՞րբ սկսուած է Յանուարին՝ Յուանուար փոխանակել՝ բոտ որում (չգտնելով ուրիշ յարմարագոյն մեկնութիւն) վերջին ձեւը բոլորապէս աւտօին ու կարգացուելուն սխալման մի արդիւնք կը համարիմ, եթէ չուզեմ սկզբնական Jann գուցէ Jann տեսած եւ թարգմանուած կարծել :

Այս ամսոյս անունն բառագրոց մէջ գրուած կայ նաեւ Յանվար, ինչպէս ռաժիւրէն նաեւ Յուանվար, որոց մէջ յայտնի է թէ ուղղապարական կանոնաց հակառակ՝ սա կամ Օնա (ուս) երկբարբառին արագ հնչուած ձայնը՝ վ գրով կը ներկայացուի :

Անշուշտ իբր բառախաղ կարող է մէկն ըսել թէ տարեմիջին ամիսը Հռովմայեցիք փոխաբերաբար իբր տարւոյ դռնն համարելով՝ janua բառէն januarius (իբր դռնական կամ դռնադար) կոչած լինին, քանի

որ մանաւանդ պատմութիւնն կը վկայէ թէ ի սկզբան այս ամիսը Հռոմէացիք տաւ նուակերորդ կը հաշուէին, և յետոյ Յուլեան տոմարին հաստատութեան աստե՛ն միայն՝ ըսկսուած է առաջին ամիս համարուիլ և դասուիլ :

Գալով փետրոսաբ ձայնին ու ձեռն՝ դիտելի է որ մեր փ տառն օտարաց $\varphi = \text{ph}$ ին համապատասխան լինելով՝ այստեղ ըստ նախ նետաց կանոնի զետեղուած է $\text{f} (\text{ֆ})$ գրի աւել, և որովհետեւ այդ ա՛նունն ծագումն առած է հռոմէական february (քաւել, սրբել, բառ որում քառօրեան տօները այս ամսոյս մէջ կը կատարուէին) բառէն, հետեւաբար հայտարէն պիտի գրուի ուղղապէս փետրոսաբ, փախանակ օսովերէն ծերական փետրոսաբ հրելման :

Ի զուր է, կարծեմ, առարկել՝ որ ուրիշ ազգաց մէջ ալ նման փոփոխութիւններ կը զտնուին, զոր օրինակ, իտալ. Gennajo կամ Gennaro, փոխանակ գրելու Giannario, և զաղղ. Février, փոխանակ գրելու Febrier, վրան զի այդ փոփոխութիւնը կարելի է զուցէ վերայիշեալ լեզուաց ձայնադրական օրինոց մեկնութիւն և արդարանան, բայց մեր մէջ ա ձայնին ու, և կամ բ շրթութիւնային տառին՝ տ առաւմայինի փոխուելուն ի՛նչ իրաւացի պատճառ կրնայ առաջ բերուիլ, բայց եթէ կամայականութիւնն և կամ դիպուածական կերպով մուտ գտած և արմատացած սխալ օտարութիւն մի :

Կը փափաքեմ ուրեմն որ այսպիսի դիւրին զործադրուելիք ուղղութիւն մի ազգիս մէջ թէ՛ գրութեամբ և թէ՛ հնչմամբ ընդհանրանայ :

Բանասէր

(Բ Պատասխան)

Սուրհանդակի չորրորդ հարցումն էր յռուար և փետրոսաբ ամսոց ուղղագրութեան վերայ, որք ըստ լա. (և յն.) ուղղագրութեան՝ ianuaris և februius, պիտի գրուէին յանոսար և փետրոսաբ : Առ այս մեր համոզումն հետեւեալն է :

Այդ ամսոց հայ անուններն առաջին ան-

գամ կը կարգանք Եւսեբեայ Քրոնիկոսին մէջ, որ և թարգմանութիւն էր դարու. « Նուա՛ն Պրոմպիդիոս, կ'ըսէ, երկուս ամիսս յաւել ի տարին, զյոննոսարիոս և զփետրոսարիոս » (Բ, յէջ 178), երկրորդ ձեւն համեմատ յն. և լա. բնագրին, և առաջինը դեռ հակառակ իսկ արդի ձեւերը կը գտնենք յեօսին պարոց (սկսեալ Եփէն) եկեղեցական պրոց մէջ. սրբուրիշ զանազանութիւն չունին հնեբէն, բայց եթէ երկրորդ ամսոյն Բ տառին շփոթմամբ ի 8 փոխուիլը, և յապատումն յն. իոս յանգին երկու ամսոց ևս ծայրերը :

Պիտի կարծէինք՝ թէ Քրոնիկոսին մէջ առաջին ամսոյն սխալն զրշագրաց պառուղ լինի յեօսին պարոց ուղղագրութեան ազդեցութեամբ, եթէ երկրորդն այլ նոյն ազդեցութեամբ փոխուած լինէր : Պիտի կարծէինք նա և այդ ազդեցութեան անկախ սովորական սխալ մի գրապրաց, եթէ Բ՛. իմաստասէր Ը դարուն չհաստատէր Քրոնիկոսին ձեւին հաստատմութիւնը, գրելով նոյնպէս և յռուար » : Ինչպէս և այլ քանի մի հին գրութիւնք, որոց հեղինակք անյայտ կամ երկբայելիք են : Այսպէս ուրեմն ի վաղուց սկսած է այն և տեւած ցայսօր : Անանիայ շիրակունին (Է դարուն) Յայտնութեան ճառին մէջ միշտ կը գրէ « յանուար » : սակայն կը թուի թէ տոմարաբէտն ուղղոր էր զայն բոս յն. բնագրին, բայց դեռ այնուհետեւ զործածելի մնացեր է վաղեմի ձեւը :

Գալով արդե՛ք սրբագրութեան խնդրոյն, մեր կարծեօք կրնայ անփոփոխ պահուիլ « յռուարը » : արքայապետ իւր բազմադարեան հնութեան համար : Զի մեր մէջ կան արիշ ոչ սակաւ օտար բառեր, որք նոյնպէս սխալ գրութիւն ունին՝ սկսեալ էր դարէն. որոց հետեւելէ թէպէտ պիտի զգուշանանք մեր թարգմանածոց մէջ, սակայն անոնց պատկառելի հնութիւնը զիրենք սրբագրելու հարկէն ազատ կը կացնէ. զոր օրինակ փիլիսոփայ՝ փոխանակ փիլոսոփոսի, մանրագոր՝ փոխ. մանդրոգորի, և այլն : Այսպիսի շեղումներ օտար լեզուաց մէջ այլ կան, օրինակ իմն լա. Pauslus և իտ. Paolo : Նոյն իսկ հայերենի մէջ կայ կրկնակ գրութեան այդ երեւոյթը. արագ և երագ, առողանել և ոռողանել, և վասի և

հինաւորաց « յունուարը » լաւ. գրութեան հաւասարեցնելու հարկ չենք տեսներ :

Բայց « փետրուարը » պէտք է փոխել աւմենայն իրաւամբ, իբրեւ հակառակ ոչ միայն լաւ. բնագրին, այլ նոյն իսկ հայերէն հին ուղղագրութեան ֆրոնիկոնի : Աւետրդ է ըսել, թէ չի պահանջուիլ զրեւ եւ « յունուարիոս », « փետրուարիոս » ըստ Եւսեբեայ. այլ մաւնաւանդ յապաւել այդ օտար յանգը, ինչպէս աղբէն գորտ թողուած է երկայն պարերէ ի վեր :

* *

Սակայն ինչո՞ւ լոկ երկու ամսոց անուանքը սրբազրեւ կ'առաջարկուի սուրհանդակի ձեռամբ, ուր միւս ամսոցն այլ նայպէս հետի են ի լաւ եւ յն. բնագրաց : Ըստ ճիշդ գրութեան՝ maiusք պետի լինէր մայիոս, junius յունիոս, julius յուլիոս, augustus աւգոստոս, october հոկտոբեր, december դեկեմբեր : Երկուստսան ամիսներէ չորքը միայն ուղիղ են. martius մարտ եւ aprilis ապրիլ, կանոնաւոր եւ արդար յապաւմամբ օտար յանգից. september սեպտեմբեր, november փոխանակ նոյեմբերի՝ զրուած նոյեմբեր՝ ազդեցութեամբ յունարենին νοέμβριος :

Այդ ամիսներ նոյն սխալներով ընդհանրապէս կը գտնուին յետին դարոց գրուածոց մէջ. բայց ոմանք նա եւ Ե դարու մասենաւորաց ըստ տարրեր կամ նոյն ուղղագրութեամբ : Այսպէս՝ Պաւլ. Թղթ. յառաջաբանի մէջ կայ « յամենանի յունի », որ է սեռականն յուն ուղղականի մի՝ կրճատմամբ իոս յանգին, — թէ եւ զուգէ միախառնութեան համար անգործածելի էր յուն, — եւ ոչ թէ անսովոր սեռական մի « յունիսի »՝ ինչպէս կարծեն բառապիրք. զի այս երկրորդս (կամ լաւ եւս յունիոս) ըստ օրինի պիտի հոլովուէր « յունեայ », ինչպէս կայ սա ֆրոնիկոնի մէջ իբր անուն մարդոյ (Ա, 397), որոյ ուղղ. է Յունիոս : Այս հոլովումն տես եւ յաւորդ բառն :

Պաւլոսի նոյն յառաջաբանին մէջ կայ եւ « յուդիս, յուդեայ », զոր ֆրոնիկոնը կը

գրէ ուղղ. « յուդիոս » (Բ, 252), եւ զնոյն իբր անուն մարդոյ՝ կը հոլովէ « Յուդեայ » (Ա, 397) կամ « Յուդի » (Բ, 252) յանգակտոր Յուդ ուղղականն մի՝ ինչպէս էր յուն : Յառաջաբանին « յուդիս » ձեւը գոմարին է ընծայել թարգմանչին, որ յունիոսը կրճատելու ժամանակ ամբողջ իոս յանգը զուր է թողեր, եւ ոչ թէ լոկ ո տառը. նա եւ ինչ պատճառաւ բոլոր նախնիք նոյն աւնունը « Յուդիոս » գրելին մարդոց վերայ, եւ ամոռն վերայ յապաւելին անսի տառ մի, Եւ ոչ կրնանք իս (յուդիս) յանգը եկամուտ համարել ի գրապիրս յուդ նախնական ձեւի մի վերայ, քանի որ նոյն տեղն « յուդեայ » սեռականը կը պահանջէ լաւ. բնագրին յանգը : Եւ հետեւաբար « յուդիոս » յառաջ « յուդիոս » էր հոն՝ ինչպէս ի ֆրոնիկոնին. մանաւանդ որ սխալ ձեւին մի միայն հին օրինակ կայ :

« Աւգոստոս » ամիսը կայ ֆրոնիկոնի մէջ (Բ, 256). եւ է կամաւոր շեղումն լաւ եւ յն. բնագրի « աւգոստոս » ձեւէն՝ հ. հնչման զիւրութեան համար. որոյ փաստ մ'է եւ այն հանգամանքն, որ այդպէս գրած են զայն նախնիք նա եւ մարդոց վերայ :

« Հոկտեմբեր » այլ կայ ֆրոնիկոնի մէջ՝ այդպէս սխալ (Բ, 276). որ թուի՝ թէ արդիւնք է ազդեցութեան երեք յարակից նմանալերէ՝ ամսոց, սեպտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր :

Իսկ « դեկտեմբեր » նախ Անան. շեղակոււոյ Յայտնութեան ճառին մէջ է գործածուած քանի մի տեղ, բայց « դեկտեմբեր » ձեւով ըստ մեր գրագրին. արդի ձեւը ծագած կը թուի՝ ազդեցութեամբ սեպտեմբեր եւ հոկտեմբեր ամսոց :

Չասոնք ինչպէս պէտք է գործածել : Ըստ մեզ՝ հինն յուն կամ յունիոս աւելի բանաւոր եւ բնորոշի են քան անկանոն կերպիւ կրճատուած « յունիս », եւ թէ մինչեւ իսկ գրագրաց սխալ չհամարուի սա, այլ հարազատ ուղղականն հին « յունի » սեռականն : — Ընտրելի է ֆրոնիկոնի յայտնի « յուդիոս » քան յետին դարոց եւ Պաւլ. Թղթ. յառաջաբանին հաւանորդն նոյն ժաւմանակները փոխուած անկանոն « յուդիս » — կրնանք ասոր հաւասարեցնել « մայիսն »

այլ՝ ուղղելով « մայիս » : — Անձեռնարկելի է « աւգոստոսը »՝ վերլուծելով պատճառաւ : — Քրոնիկոնի « հսկումներին » դժմ թիժ ուղղազոյն հին օրինակ մի չկարենանք գնել, « յոշնուարի » հետ դասելի է : — Իսկ և « դեկտեմբեր » ուղղելի է « դեկեմբեր » ըստ ճիշդ և հնագոյն ընթերցուածոյ Շիրակունւոյն :

ՀԱՅՈՒՆԻ

Պ. ՎԱՀՐԱՄ ՍՎԱՃԵԱՆ

ՀԱՅ ԵՐԱԺԻՇՏ

Պարիսոս լրագիրք փետրուարի առաջին օրերուն մէջ կը ծանուցանէին՝ որ « հայ երիտասարդ զաշնականար մը Պ. Վահրամ Սվաճեան, աշակերտ Վենետիկ » և Վիննայի երաժշտանոցաց, յետ յաջող նուագահանդիսական պտոյսներու յԱնգղիա, 'ի Գերմանիա և 'ի Ղուեցերի, 'ի Պարսի ևս եկեր էր և փետրուար 9ին էր օրս սրահին մէջ նուագահանդէս մը պիտի տար, առաջին մասը արեւմտեան երաժշտութեամբ, երկրորդը՝ հայկական երաժշտութեամբ, որ իրեն սեպհական ուսումնասիրական ճիւղն ըրած էր » : Միանգամայն կը յաւելուին զսկստներ եւրաժշտին առաջնորդին վրայ :

Եւ ահա Գաղղիոյ մայրաքաղաքին մէջ ևս, ուր կը դիմեն ամենաինքն երաժշտական հանճարներ, և ուր հարկ էր մասնաւոր աւջողակութիւն մը և խրախոյս ունենալ հասարակութեան ներկայանալու համար, Պ. Վահրամ

Սվաճեան ունեցաւ երկուքն ալ լիովին արդեամբք :

Փետրուար 10ի Temps լրագրին թատերական տեղեկութեանց մէջ կը կարդանք հետեւեալ առդերը .

« Պ. Վահրամ Սվաճեան հայ երիտասարդ զաշնականար, որուն նուագահանդէսը քիչ օր առաջ ծանուցինք, երկ երեկոյ զայն կատարեց գերազանցապէս ազնուաշուք և թաղմամբ ունկնդրաց շողիւ : »

Նուագահանդիսին առաջին մասը կը կազմէին ընտիր դասական (classique) կտորներ, Բէտովենի հելլեն մը, Շիւմանի արարական մը և Լիսթի՝ յոռք փրանկիսկոս Պաշայեցի քայլելով աշեաց վրայ, որոնք ցըրուցին Պ. Սվաճեանի արեստական ամենաչքնաղ յատկութիւնները :

Հայկական երգերուն մէջ, զորս ժողովրդ և զաշնակի վերածեր էր և որոնք ծրագրին երկրորդ մասը կը կազմէին, երիտասարդ եւրաժիշտը եռանկազին ծափահարութիւնք ունեցաւ զմայլեալ հասարակութիւնէն, որ յազուեր էր այլ փափուկ և միանգամայն զգայուն երաժշտութիւնէն » :

Մեզ համար կրկին ուրախանալու մեծ նիւթ կայ, նախ Պ. Վահրամ Սվաճեան հայ զաշնականարին լիովին յաջողութեանը վրայ, երկրորդ հայկական երաժշտութեան զըտած յուզեալ ընդունելութեանը համար : Այսպէս ահա նոր ասպարէզ մը կը բացուի հայ երիտասարդ երաժշտաց ուսումնասիրելու ազգային երգեցողութիւնքը, ոչ միայն ժողովրդականքը՝ այլ և եկեղեցականքը, յորս կը գտնուին արհեստի հիւանալի կտորներ, որք թէ առանց փոխուելու վերածուին եւրպական ներդաշնակութեան կանոնաց, նոր և գեղեցիկ երաժշտութիւն մը պիտի կազմեն սեպհական կնիքով մը :

1. Պ. Վահրամ Սվաճեան, աշակերտ Մուրատ-Ռաֆայէլ վարժարանի, ու ի տարուան ժամանակ՝ սկսեալ 1877էն՝ զաշնական հարութեան և ներդաշնակութեան առաջին տարիները ըրած է 'ի Վենետիկ, ընդ ուղղութեամբ ասպետ Նիկողայոս Քոլոնի, նշանաւոր երգաչի 'ի քաղաքիս, որ ցարք զմայլմամբ և սիրով կը յիշէ Պ. Վ. Սվաճեանի արտաքայ կարգի կարողութիւնը :

